



**DIOCÈSE DE FRANCE
DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE**
Son Excellence Monseigneur Vahan Hovhannessian, Primat de France

**Է – ԹԵՐԹԻԿ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

N°. 11, Tome 2, le 29 juin 2015

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

19 Յունիս 2015-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ կարճ այցելութիւն մը տուաւ Փարիզ, մասնակցելու համար Ազգային Ժողովի «Քոյալեր» սրահին մէջ Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպած խորհրդաժողովին, «Արդարութիւն եւ Հատուցում» խորագրով: Բացումը կատարեց Ազգային Ժողովի Ընկերավարական խմբակցութեան նախագահ Պրիմօ ԼԸ ՌՌԻ, բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, հոգեւոր դասին եւ հայ համայնքի ներկայացուցիչներուն: Ան շեշտեց կարեւորութիւնը արդարութեան եւ հատուցման: Ապա ան բեմ հրաւիրեց Վեհափառ Հայրապետը, որ ոգեշնչող դասախօսութիւն մը տուաւ Հայոց Յեղասպանութեան, պահանջատիրութեան եւ հատուցումներու մասին: Ապա խօսք առին Գեղամ Գեւորեան, Արա Քոչունեան, Յարութ Մարտիրոսեան եւ Մուրատ Փափագեան: Վահան Եպս. Յովհաննէսեան, առաջնորդ, Հայ Դատի Յանձնախումբի անդամներուն հետ միասին եղաւ Վեհափառ Հայրապետին հետ մինչեւ մեկնումը:




ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ-Ի ՎԱԽՃԱՆՈՒՄԸ

Հինգշաբթի 25 Յունիսին վախճանեցաւ Հայ Կաթողիկէ Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ. Թարմունի, 75 տարեկան հասակին, սրտի տագնապի հետեւանքով: Օնաճ էր 1940-ին Գահիրէ, ընտանիքի 8 զաւակներէն 5-րդն էր: Ուսումը ստացած էր կաթողիկէ դպրոցի մէջ, ուր յայտնաբերած էր հոգեւորական դառնալու կոչումը: 1958-ին Հռոմ կը դրկուի աստուածաբանական բարձրագոյն ուսման համար: 1965-ին կը ստանայ քահանայական ձեռնադրութիւն եւ կը ծառայէ Աղեքսանդրիայի համայնքին, 1990-ին Աղեքսանդրիայի եպիսկոպոս կը կարգուի, իսկ 1994-էն սկսեալ եպիսկոպոսական սինոտի անդամ կը դառնայ: 1999-ին կընտրուի Կաթողիկէ Հայոց Պատրիարք, յաջորդելով Յովհաննէս Պետրոս ԺԹ. Գասպարեան Պատրիարքին: Անցեալ Ապրիլին ան Ֆրանսուա Պապին հետ համապատարագեց Հռոմի Ս. Պետրոս Մայր Տաճարին մէջ, Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առթիւ: Աստուած հոգին լուսաւորէ, յիշատակը օրհնեալ ըլլայ: Ամէն:




ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

նհատականԵրկուշաբթի 22 Յունիսին Վահան Սրբազան նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին, մասնակցութեամբ Թեմական Պատգամաւորական Ժողովի ատենապետ Պրն. Արա Տէյիւմէնճեանի, Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն. Փաթրիս Ճօլօլեանի եւ Թեմական Խորհուրդի անդամներու, Փարիզի առաջնորդարանին մէջ: Սրբազան Հօր բացման աղօթքէն ետք Պրն. Փաթրիս Ճօլօլեան ներկայացուց օրակարգի կէտերը՝ Սրբազան Հօր զեկոյց, տնտեսական զեկոյց, ծուխերու կացութիւն, ներառեալ Նիսի խնդիրը, Շաբաթ 10 Հոկտեմբեր 2015-ին կայանալիք թեմական առաջին ընթրիքը: Քննարկուեցաւ թեմի պիւտճէին ծուխերու մասնանւոթեան հառոտ:




ՈՒՔՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՐԷՍ 15-23 ՅՈՒՆՈՒՍԱՐ 2016

Առաջնորդի գրասենեակը հաճոյքն ունի տեղեկացնելու, որ Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբը ուխտագնացութիւն մը կը կազմակերպէ դէպի Երուսաղէմ, 15-23 Յունուար 2016-ին, բարձր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Ֆրանսայի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեանի: Նախատեսուած է այցելել սուրբգրական վայրեր եւ Հայոց Պատրիարքարան, Սրբազան Հօր բացատրութիւններով: Մասնակցութեան սակն է 1750 եւրօ, որուն մէջ ներառնուած են երթուղարձի օդանաւի տոմսերը, 4 աստղանի պանդոկ, նախաճաշ-ճաշ-ընթրիք, օթոքարով պտոյտներ ֆրանսախօս թարգմանիչի ընկերակցութեամբ, ապահովագրութիւն եւ սպասարկութեան նուէրներ: Անհատական սենեակի համար նախատեսուած է յաւելեալ 470 եւրօ: Տեղերու ապահովման վերջնական պայմանաժամն է 4 Հոկտեմբեր 2015: Չէքերը գրել Comité de Dames-ի անունով: Մանրամասնութիւններու համար հեռաձայնել 0143 59 67 03 եւ 0615 02 76 84 թիւերուն, կամ դիմել՝ bureauduprimat@yahoo.fr




ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՓԱՐԻԶԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆԵՐ

Ֆրանսայի մէջ մեր բարեկամներուն հետ յարաբերութիւնները սերտացնելու եւ փոխադարձ հետաքրքրութիւնները խորացնելու նպատակով Վահան Սրբազան ծրագրած է զանազան այցելութիւններ Փարիզի դեսպանատունէր: Հինգշաբթի առաւօտ ան այցելեց Լիբանանի դեսպանատուն եւ ընդունուեցաւ հաւատարմատար Ղատի էլ Խուրիի կողմէ: Խօսակցութեան առարկայ դարձան երկու ազգերու միջեւ խոր կապը եւ հայ ժողովուրդի նպաստը Լիբանանի առօրեայ կեանքին: Երկու կողմերը ընդգծեցին իրենց մտահոգութիւնը Միջին Արեւելքի ապահովութեան նկատմամբ: Նոյն օրը յետմիջօրէին Վահան Սրբազան այցելեց Իրանի դեսպանատուն եւ ընդունուեցաւ դեսպանին Ալի Ահանիի կողմէ: Հանդիպման ներկայ էր նաեւ մշակութային կցորդը: Դեսպանը շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր այս այցելութեան համար եւ ընդգծեց համագործակցութեան կարեւորութիւնը երկու ժողովուրդներուն միջեւ որպէս դրացի պետութիւններ եւ որպէս փոքրամասնութիւններ Ֆրանսայի մէջ:




ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹՐԻՔ – ՇԱԲԱԹ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2015

Առաջնորդ Սրբազանն ու Թեմական Խորհուրդը հաճոյքն ունին ձեռք հրաւիրելու թեմի կազմակերպած առաջին ընթրիքին Շաբաթ 10 Հոկտեմբեր -ի ժամը 20:00-ին Collectionneur պանդոկին մէջ, նպատակ ունենալով իրարու մօտ բերել մեր Եկեղեցւոյ բարեկամները: Այս երեկոյի նշանաբանը պիտի ըլլայ «Կառուցել մեր Եկեղեցին աւանդութենէն արդիականութիւն» եւ առիթ պիտի տայ իւրաքանչիւրին իր ներդրումը ունենալու: Առաջնորդ Սրբազանը պիտի ներկայացնէ իր ծրագիրը յառաջիկայ տարիներու համար, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ առաքելութիւնն ու դիմագրաւելիք մարտահրաւերները: Ընթրիքի մասնակցութեան սակն է 125 եւրօ: Տեղերը ապահովելու համար դիմել Առաջնորդի Գրասենեակ, 15 rue Jean Goujon : Ընթրիքին պիտի նախորդէ Հինգշաբթի 8 Հոկտեմբերին ցուցահանդէս մը, Երեւանի Հայոց Յեղասպանութեան Թանգարան կողմէ տրամադրուած նկարներով, որոնք կը ներկայացնեն հայ եկեղեցիները 20-րդ դարասկիզբին, ինչպէս նաեւ դասախօսութիւն մը նուիրուած Հայ Եկեղեցւոյ նահատակներուն, առաջնորդադանի «Նուռեան Ֆոնէնեան» սրահին մէջ: Մուտքը ազատ է:



Տ. ԱԻԵՏԻՍ Ա. ՔՀՆՅ. ՊԱԼԸԳԵԱՆԻ 30-ԱՄԵՆԱԿԸ

Շաբաթ 12 Յունիսը յատուկ օր մըն էր Բսի ԼԷ Մուլինոյի հայկական համայնքին համար: Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին տօնակատարեց իր հոգեւոր հովիւին Տ. Աւետիս Ա. Քհնյ. Պալըգեանի քահանայական ձեռնադրութեան 30-րդ տարեդարձը: Համեղ ընթրիքի կողքին ներկայացուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր, նուագ, հայկական պարեր եկեղեցւոյ երիտասարդական պարախումբի կողմէ, ինչպէս նաեւ ողջոյնի խօսքեր հրաւիրեալներու եւ ընտանիքի անդամներու կողմէ: Իր սրտի խօսքով հանդէս եկաւ նաեւ յոբելէար Տէր Հայրը, որ յիշեց իր ծնողքը, մեծ ծնողքը եւ ուսուցիչները որոնք դաստիարակած էին զինք: Ջերմ խօսքերով իր շնորհակալութիւնը յայտնեց իր ընտանիքին եւ բոլոր անոնց որոնք նեցուկ կանգնած էին իր 30-ամեայ ծառայութեան ընթացքին: Ներկայ էին Տ. Գիւտ Արք. Նազգաշեան, Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան, Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն. Փաթրիս Ճօլօլեան, Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Հայկազ Կէօրտեպար Տրդատեան եւ շուրջ 200 հրաւիրեալներ:



ՄՐԲԱԶԱՆԸ ԱՅՅԵԼԵՅ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՏՈՒՆ

Վահան Եպս. Յովհաննէսեան, ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն. Փաթրիս Ճօլօլեանի եւ Պրն. Գեղամ Գեւորեանի, այցելեց Հայ Ուսանողներու Տուն, ուր դիմաւորուեցաւ Տան տնօրէն Սահակ Սրկ. Սուքիասեանի կողմէ: Անոնք այցելեցին շէնքի զանազան բաժանմունքները եւ զրադարանին մէջ հաւաքուելով Սահակ Մարկաւազ բացատրութիւններ տուաւ այս կարեւոր հաստատութեան պատմութեան մասին: Հայ Ուսանողներու Տունը Փարիզի Համալսարանական Ուսանողներու Միջազգային Տան 40 հանրակացարաններէն մէկն է, հիմնուած 1930-ին Պօղոս Նուպար Փաշայի կողմէ, ճարտարապետութեամբ Լեւոն Նաֆիլեանի, որ ճարտարապետն էր Գահիրէի հայկական եկեղեցւոյ: Բացումը կատարուած է 16 Դեկտեմբեր 1930-ին: Պօղոս Նուպար Փաշա 1927-ին 3 միլիոն ֆրանք նուիրած է հայ ուսանողներու հանրակացարանի շինութեան համար:

